

**Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Հետազոտական վարժարան**

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Թվային համացանցը Հայաստանում

**Սովորող՝ Աշոտ Հովեյան
Դասարան՝ 10-1
Ղեկավար՝ Հերմինե Անտոնյան**

Երևան 2024

Բովանդակություն

| | |
|----------------|----|
| Ներածություն | 2 |
| Գլուխ 1 | 3 |
| Գլուխ 2 | 4 |
| Գլուխ 3 | 5 |
| Գլուխ 4 | 14 |
| Եզրակացություն | 20 |

Ներածություն

Բարձր տեխնոլոգիաների զարգացումը որոշիչ դեր ունի պետությունների մրցունակության, անվտանգության և կենսամակարդակի բարձրացման գործում:

Այն պետությունները, որոնք ստեղծում և զարգացնում են բարձր տեխնոլոգիաները, փոփոխություններ են գրանցում մրցակցային դաշտում և առաջատար դիրքեր զբաղեցնում միջազգային ասպարեզում:

Բարձր տեխնոլոգիաների զարգացումը թույլ է տալիս զարգացնել տնտեսության մյուս ճյուղերը, քանի որ նոր տեխնոլոգիաների ներդրումն իր հերթին բերում է տնտեսության մրցակցային առավելության, կառավարման համակարգերի օպտիմալացման, արդյունավետության բարձրացման և նորարարությունների խթանման: Բարձր տեխնոլոգիական զարգացումը կարևոր տեղ ունի նաև պետության անվտանգության և բնակչության կենսամակարդակի բարձրացման գործում:

Փորձը ցույց է տալիս, որ գիտահետազոտական և բարձր տեխնոլոգիական առաջընթացը հանգեցնում է տաղանդների ներհոսքի և բնակչության կենսամակարդակի կտրուկ աճի, ինչն իր հերթին բերում է տվյալ երկրի կամ տարածաշրջանի բնակչության աճի, որը Հայաստանի զարգացման և անվտանգության ապահովման գլխավոր նախապայմաններից է:

Հայաստանի Հանրապետությունն ունի բոլոր նախադրյալները՝ դառնալու բարձր տեխնոլոգիական արդյունաբերական երկիր՝ ներառելով և ընդգրկելով արժեշտային բոլոր օղակները՝ կրթությունից մինչև գիտական հետազոտական աշխատանքներ, մշակումներից և արտադրությունից մինչև միջազգային վաճառք և կիրառություն տնտեսության և կենցաղի տարբեր ոլորտներում: Հայաստանում զարգացած են այնպիսի բարձր տեխնոլոգիական ուղղություններ, ինչպիսիք են տեղեկատվական տեխնոլոգիաները, միկրոէլեկտրոնիկան, մաթեմատիկան, ֆիզիկան, նյութագիտությունը և այլն:

Բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ռազմավարության իրականացումը նպատակ ունի ընդլայնել Հայաստանում բարձր տեխնոլոգիական ապրանքների և ծառայությունների մշակումը՝ ներառելով արհեստական բանականություն, կիբեռանվտանգություն, բլոքչեյն, քվանտային համակարգչային տեխնոլոգիաներ և այլ առաջատար ուղղություններ:

Հայաստանի թվայնացման ռազմավարությունը կոչված է նպաստելու հանրային ծառայությունների մատուցման բարձր որակի ապահովմանը, պետական կառավարման համակարգի արդյունավետությանն ու թափանցիկությանը, մասնավոր ոլորտի մրցունակության բարձրացմանը և տնտեսական աճի համար անհրաժեշտ թվային հմտություններով աշխատուժի զարգացմանը:

Ռազմական արդյունաբերության (այսուհետ՝ ՌԱ) զարգացման հիմնական ուղղություններն առավելապես պայմանավորված են համաշխարհային տեխնոլոգիական առաջընթացի, պատերազմի բնույթի, վարման ձևերի ու եղանակների փոփոխման միտումներով: Ներկայումս պաշտպանության բնագավառում Հայաստանի առջև ծառայած առաջնային խնդիրներից է զինված ուժերի կարողությունների զարգացումն ու ժամանակակից սպառազինությամբ,

ռազմական տեխնիկայով և նյութատեխնիկական միջոցներով դրանց հագեցումը՝ հայրենական և արտերկրի արտադրության լավագույն նմուշների համակցությամբ:

Ռազմական արդյունաբերության համալիրի (այսուհետ՝ ՌԱՀ) առաջնահերթություններից է սահմանել ՌԱ զարգացման գերակա ուղղությունները, ընտրված ուղղություններով կազմակերպել արտադրական և գիտահետազոտական կարողությունների ընդլայնումը, գնահատումը, արտաքին շուկաների ուսումնասիրությունը, վաճառքի մեխանիզմների և գործիքակազմի ներդրումն ու արդյունավետ կիրառումը:

Այս նպատակով մշակվել է Ռազմական արդյունաբերության համալիրի (ՌԱՀ) զարգացման ռազմավարությունը:

ԳԼՈՒԽ 1

Համացանցը Հայաստանում (զարգացում)

Համացանցը Հայաստանում (ինտերնետ) ժամանակակից հաղորդակցության հիմնական միջոցներից է և կարևոր դեր ունի գլոբալ հաղորդակցության, կրթության և միջազգային շուկաներ ելքի հարցում: Բարձրորակ համացանցը Նորագույն ոլորտների (Էլեկտրոնային կառավարում, կրթություն, առևտուր, բժշկություն) զարգացման կարևորագույն նախապայման է:

Հայաստանում առաջին կապուղին սկսել է գործել դեռևս 1988 թվականին ԽՍՀՄ կիրառական ավտոմատ համակարգերի ինստիտուտի հայկական մասնաճյուղում համակարգչային ցանցերին միացնող 2400 բիթ/վ թողունակությամբ Հայաստանում առաջին կապուղին եվրոպական համակարգչային ցանցերին է միացել Մոսկվայի կենտրոնական գրասենյակի միջոցով:

1993 թվականին «Արմինկո» ընկերությունն առաջին անգամ համացանցին միացել է TCP/IP փաթեթով, «Սովամ-Տելեպորտ» ռուսական ընկերության հետ, տեղադրել Հայաստանի առաջին վեբ սերվերը՝ www.arminco.com: Նույն թվականին Երևանի ֆիզիկայի ինստիտուտում տեղադրվել է արբանյակային կապուղի, որով ինստիտուտը TCP/IP արձանագրությամբ Մոսկվայի պետական համալսարանի միջոցով Հայաստանը միացել է համացանցին՝ Հայաստանի գիտական հիմնարկների համար ապահովելով համացանցային միացում:

1994 թվականին ստեղծվել է Հայաստանի «Ինտերնետից օգտվողների միությունը», որն IANA-ից (Internet Assigned Numbers Authority) ստացել է *.am դոմենային տիրույթ վարելու իրավունքը:

1994 թվականին .am դոմենային տիրույթի կենտրոնական սերվերը տեղադրվել է Հայաստանում և ստեղծվել է *.am տիրույթի ցանցային տեղեկատվական

կենտրոնը (armnic.net), որը մինչև 2010 թվականը վարել է «Արմինկո» ընկերությունը:

2000 թվականին «Ինտերնետից օգտվողների միությունը» (այժմ՝ «Ինտերնետ հանրություն» ՀԿ) դոմենային անունները գրանցելու գործառույթը հանձնել է գրանցող առևտրային կազմակերպություններին: Ներկայումս գրանցող կազմակերպությունները 12-ն են, գրանցված դոմենային անունները՝ ավելի քան 15 հազար:

Հեռահաղորդակցության միջազգային միության հրապարակած հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի համաշխարհային ցուցանիշների վերաբերյալ հաշվետվության համաձայն՝ 2007 թվականին համացանցից օգտվել է Հայաստանի բնակչության 6 %-ը, 2010 թվականին՝ 36 %-ը:

Հայաստանում գործում են համացանցի 3 մեծածախ մատակարարներ՝ «ԱրմենՏել», «Յուլքոմ» («Ucom CJSC») «ԶիէնՍի-Ալֆա» («GNC-Alpha») և «Ֆայբեր-Նեթ» («FiberNet») ընկերությունները, որոնք ունեն Վրաստանի և Իրանի տարածքով անցկացված կապի օպտիկամանրաթելային գծեր: Համացանցի մանրածախ առաջատար մատակարարներ են «ԱրմենՏել», «ՎիվաՍել-ՄՏՄ», «ԷյԴիՍի» («ADC»), «Արմինկո» ընկերությունները:

Ներկայումս «Յուլքոմ» և «ՎիվաՍել-ՄՏՄ» օպերատորները Հայաստանի տարածքի 95 %-ն ապահովում են 3G 4G ծածկույթով, «ՎիվաՍել-ՄՏՄ»-ի GPRS ծածկույթը 99,8 % է: «ԱրմենՏել» ընկերության շարժական և սևեռված ցանցից կարող է օգտվել Հայաստանի բնակչության 99 %-ը, ընկերության 3G ցանցով ծածկված են Հայաստանի 24 քաղաքներ և տասնյակ գյուղական բնակավայրեր:

Համացանցը երկրի բոլոր անկյունները հասցնելու նպատակով Հայաստանի կառավարությունը նախատեսել է 3 տարում ստեղծել 100 Մբիթ/վ թողունակությամբ լայնաշերտ ազգային համացանց:

ԳԼՈՒԽ 2

Համացանցի կառավարում

Համացանցի կառավարման հիմնախնդիրների մասին բանավեճերի, հատկապես 2003 թ. ժնևում WSIS-ի (World Summit of the Information Society, տեղեկատվական հասարակության հարցերով համաշխարհային բարձր մակարդակի հանդիպում) առաջին փուլի ընթացքում հակասություններ առաջացրին «կառավարում» տերմինը և դրա տարբեր մեկնաբանությունները: Այդ մեկնաբանություններից մեկի համաձայն, «կառավարումը» կառավարություն բառի հոմանիշն է: Շատ պետությունների ներկայացուցիչներն ի սկզբանե այդ

հասկացության մեջ այդպիսի իմաստ էին դրել և ենթադրում էին, որ պետությունները միջկառավարական հիմունքներով պետք է կանոնակարգեն համացանցը՝ այլոց, հիմնականում ոչ պետական դերակատարների սահմանափակ մասնակցությամբ: 3 Այսպիսի մեկնաբանությանը հակադրվեց «կառավարում» տերմինի այլ, ավելի լայն ըմբռնումը, որը ենթադրում է տարբեր, այդ թվում՝ ոչ պետական ինստիտուտների գործունեության կարգավորում: Հենց այս գնահատականից կառչեցին համացանցային ընկերությունները, քանի որ դա ավելի է համապատասխանում համացանցի ստեղծման իսկ օրվանից նրա կարգավորման առանձնահատկություններին: Տերմինաբանական խառնաշփոթը կրկնապատկվեց «կառավարում» (governance, անգլ.) բառի այլ լեզուներով տարբեր թարգմանությունների շնորհիվ: Իսպաներենով 12 Համացանցի կառավարում այդ տերմինը գերազանցապես վերաբերում է պետական գործունեությանը կամ կառավարությանը (gestión pública, gestión del sector público, función de gobierno): Ֆրանսերենը նույնպես այդ բառն արտահայտում է պետական և կառավարության գործունեությունը (gestion des affaires publiques, efficacité de l'administration, qualité de l'administration, mode de gouvernement): Նման իրավիճակ է նկատվում նաև պորտուգալերենում՝ ակնհայտ է այդ տերմինի կապը պետական սեկտորի և կառավարության գործունեության հետ (gestão pública, administração pública):

Գլուխ 3

Սոցիալական ցանցեր

Ինչ է կատարվում Հայաստանի սոցիալական ցանցերում, որտե՞ղ է լսարանը աճել, որտե՞ղ՝ տրանսֆորմացվել:

Մեծ հաշվով, հիմնականում լսարանները աճում են, կամ մնում են անփոփոխ: Կան հարթակներ, որոնց վիճակագրությունը մեզ հստակ հայտնի չէ, քանի որ սոցիալական ցանցը չի տրամադրվում Հայաստանի լսարանի վերաբերյալ տեղեկատվություն:

Այդպիսինն է ՏիկՏոկը: Մինք գիտենք, որ սոցցանցի լսարանը մեծ է, Հայաստանում հասնում է հարյուր հազարավոր օգտատերերի, բայց չունենք հստակ թվեր: Նույնը վերաբերում է Տելեգրամին: Այստեղ նույնպես հասկանալի է, որ լսարանը անընդհատ աճում է, սակայն հստակ վիճակագրություն չունենք:

Հարկավոր է հաշվի նստել այն փաստի հետ, որ լսարանների աճը նաև պայմանավորված է Հայաստան տեղափոխված տասնյակ հազարավոր Ռուսաստանի, Բելառուսի և Ուկրաինայի քաղաքացիներով: Նրանք արդեն սոցցանցերի կողմից դիտարկվում են որպես Հայաստանում գտնվող օգտատեր:

Երևի թե ռելիքանտների պատճառով է, որ Լինքդինի լսարանը Հայաստանում աճել, անցել է 320 հազարը:

Ֆեյսբուքի լսարանը արդեն մի քանի տարի է հասել է իր հազեցածության շեմին և չի աճում: Այն, կախված հասարակական և քաղաքական իրավիճակից, տատանվում է 1,3- 1,5 միլիոն ամսեկան կտրվածքով օգտատերերի միջև: Այստեղից արտագաղթել է հիմնականում երիտասարդությունը, որն իրեն շատ ավելի լավ է զգում Ինստագրամում, և մի փոքր մասն էլ` Թվիթերում:

Ինստագրամը վսահաբար լսարանի մեծությամբ մոտենում է Ֆեյսբուքին, այստեղ արդեն մոտ 1-1,1 միլիոն ակտիվ օգտատեր կա, և այս թիվը դանդաղ, բայց ամեն ամիս աճում է: Ինստագրամի լսարանի մոտ երեք քառորդը մինչև 35 տարեկան օգտատերերն են: Մինչդեռ Ֆեյսբուքում օգտատերերի կեսը 35 տարեկանից մեծ են:

Թվիթերը վերջապես բացեց Հայաստանի լսարանի վերաբերյալ վիճակագրությունը, և այստեղ ակտիվ համայնքի թիվը հասնում է 100 հազարի: Թվիթերում օգտատերերի երկու երրորդը արական սեռի ներկայացուցիչ են: Գերակշռող մասը` մինչև 35 տարեկան:

Անհայտ է մնում Փինթերեստի լսարանը, որը փոքր չէ: Ամենայն հավանականությամբ, շատ իզականացված հարթակ է: Բայց դա դեռ ենթադրություններ են, ավելի մանրամասն մենք կիմանանք տվյալները, երբ հարթակը վերջապես իր գովազդային հնարավորությունները կբացի Հայաստանի համար:

Ինչ վերաբերում է Յություբին, ապա այստեղ այցելու հանդիսանում են գրեթե բոլոր հայաստանյան ինտերնետից օգտվողները: Իսկ այ որ մասն է հանդիսանում բուն Յություբում գրանցված. օգտահաշիվ ունեցող` տվյալներ չկան:

Սրանք տվյալներ են, որոնք հասանելի են հարթակների գովազդային կառավարման վահանակներից:


Ներկայիս Հայաստանում ինտերնետի նշանակության մասին ընդհանուր պատկերացում են տալիս հետևյալ ցուցանիշները: 2021 թ.-ին ինտերնետից օգտվում էր Հայաստանի չափահաս բնակչության 82%-ը: Ամեն օր ինտերնետից օգտվում էր Հայաստանի չափահաս բնակչության 72%-ը (Գծապատկեր 1), իսկ առնվազն շաբաթը մեկ անգամ ինտերնետից օգտվում էր Հայաստանի բնակչության 6%-ը: Սա նշանակում է, որ, երբ անձը սկսում է օգտվել ինտերնետից, ապա նա արագորեն վերածվում է ինտերնետի ակտիվ օգտագործողի:

Ինտերնետից երբեք չէր օգտվել կամ չգիտեր, թե ինչ է ինտերնետը Հայաստանի չափահաս բնակչության 18%-ը:

Ինտերնետային սոցիալական որևէ ցանցից օգտվում է Հայաստանի բնակչության 79.4%-ը, այսինքն` համարյա բոլոր ինտերնետից օգտվողները միաժամանակ օգտվում են նաև սոցիալական որևէ ցանցից: Առավել կիրառելի սոցիալական

ցանցերն են Ֆեյսբուքը, որից օգտվում է Հայաստանի բնակչության 71%-ը և Յութուքը, որից օգտվում է Հայաստանի բնակչության 60%-ը:

Գծապատկեր 1. Ինտերնետից օգտվելու հաճախությունը Հայաստանում



Ինտերնետի օգտագործումը սոցիալ-ժողովրդագրական խմբերում

Ինտերնետից ամեն օր օգտվողների քանակը սոցիալ-ժողովրդագրական խմբերում տրված է Գծապատկեր 2-ում:

Գծապատկերի տվյալները ցույց են տալիս, որ ամեն օր ինտերնետ օգտագործողների հարաբերական քանակը գյուղերում (69%) շատ քիչ է զիջում Երևանին (73%) և այլ քաղաքներին (75%): Ամեն օր ինտերնետից օգտվող տղամարդկանց և կանանց հարաբերական քանակները մոտավորապես նույնն են՝ համապատասխանաբար 73% և 72%:


Ամեն օր ինտերնետ օգտագործելու տեսակետից Էական տարբերություններ են առկա տարիքային, կրթական և բարեկեցության խմբերում:

Ամեն օր ինտերնետ օգտագործողները 18-29 տարեկանների խմբում կազմում են 92%, այն դեպքում, երբ 60 և ավելի տարեկանների խմբում՝ 46%: Այդուհանդերձ այն փաստը, որ տարեց անձանց խմբում ինտերնետից ամեն օր օգտվում է նրանց մոտ կեսը, նշանակում է որ տեղեկություններ ստանալու տեսակետից ինտերնետն արդեն կարևոր գործիք է նաև այդ խմբի համար:

Մոտավորապես նույն պատկերն է նաև կրթամակարդակի տարբեր խմբերում: Ամեն օր ինտերնետից օգտվողները ամենից մեծ տոկոս են կազմում թերի բարձրագույն կրթությամբ անձանց խմբում (որոնց բացարձակ մեծամասնությունը պատկանում 18-29 տարեկանների խմբին)՝ 94%: Այդ ցուցանիշն ամենից ցածրն է միջնակարգից ցածր կրթամակարդակ ունեցող անձանց խմբում՝ 52%:


Ունևորների և հարուստների խմբերում ամեն օր ինտերնետ օգտագործողների քանակը համապատասխանաբար կազմում է 84% և 87%, իսկ չքավորների և աղքատների խմբերում՝ 61% և 62%:

Գծապատկեր 2. Ինտերնետից ամեն օր օգտվողները սոցիալ-ժողովրդագրական խմբերում



Ինտերնետից երբեք չօգտվող կամ ինտերնետից անտեղյակ մարդկանց հարաբերական քանակը սոցիալ-ժողովրդագրական խմբերում ունի ճիշտ հակառակ պատկերն, ինչ ամեն օր ինտերնետից օգտվողների դեպքում (Գծապատկեր 3):

Գծապատկեր 3



Ինտերնետից օգտվելու գերակա ուղղությունները

«Կովկասյան բարոմետր» հետազոտությունների շարքում սկսած 2011 թ.-ից դիտարկվել է ինտերնետի օգտագործման գերակա ուղղությունները: Դրա համար կիրառվել է հետևյալ հարցը. «Նշվածներից ո՞ր գործողություններն եք ամենաշատը անում, երբ օգտվում եք համացանցից: Խնդրում եմ նշել երեք ամենահաճախակի արվող գործողությունները»:

Ինտերնետի օգտագործման գերակա (առավել հաճախակի) ուղղությունները 2011-2021 թթ. ընթացքում ներկայացված են Աղյուսակ 1-ում: Հարկ է նշել, որ տարբեր տարիներին հետազոտական հարցաշարերում ինտերնետի կիրառման գերակա ուղղությունների սահմանումները փոքր-ինչ տարբերվել են: Այդ պատճառով աղյուսակում անհամատեղելի տվյալների դեպքում համապատասխան վանդակում տվյալը բացակայում է:

Աղյուսակ 1. Ինտերնետից օգտվելու գերակա ուղղությունները («Նշվածներից ո՞ր գործողություններն եք ամենաշատը անում, երբ օգտվում եք համացանցից: Խնդրում եմ նշել երեք ամենահաճախակի արվող գործողությունները»): Թույլ է տրվել նշել երեք առավել հաճախ օգտագործվող ուղղությունները:

| Ինտերնետի օգտագործման ուղղությունները (նշվել են 3 առավել հաճախ օգտագործվող ուղղությունները) | 2011 | 2013 | 2015 | 2017 | 2019 | 2021 |
|---|------|------|------|------|------|------|
| Ֆեյսբուքի օգտագործում | 16% | - | - | 46% | 51% | 65% |
| Այլ սոցիալական ցանցերի օգտագործում | 43% | 60% | 53% | 31% | 36% | 17% |
| Տեսահոլովակներ /Երաժշտություն դիտում/ներբեռնում | 19% | 26% | 20% | 24% | 19% | 31% |
| Նորությունների դիտում/ունկնդրում | 19% | 34% | 23% | 34% | 36% | 30% |
| Ինֆորմացիայի փնտրում | 49% | 39% | 34% | 28% | 28% | 23% |
| Նամակների ստացում/ուղարկում | 25% | 17% | 13% | 14% | 11% | 12% |
| Առցանց խաղեր խաղում | 16% | 12% | 9% | 5% | 2% | 6% |
| Գնումներ կատարում | 1% | 1% | 1% | 2% | 2% | 3% |
| Բլոգ գրում/կարդում | 1% | 1% | 0% | 1% | 1% | 1% |
| Ծանոթությունների կայքերի հաճախում | 4% | 2% | 0% | 1% | 1% | 1% |
| Մասնակցում ֆորումային քննարկումների | 1% | 0% | 1% | 2% | 1% | - |
| Մեսենջերի օգտագործում | 38% | - | - | - | - | 43% |
| Skype-ի օգտագործում | - | 63% | 55% | 35% | 19% | - |
| Մեսենջերի օգտագործում (բացի Skype-ից) | - | 5.1% | 7.5% | - | - | - |
| Մասնակցություն վեբինարների և դասընթացների | - | - | - | - | - | 4% |
| Մոլախաղեր խաղում/ խաղադրույքներ կատարում | - | - | - | 0.5% | 0.5% | 0.3% |
| Օգտվում առցանց բանկային ծառայություններից | 1.4% | - | - | - | - | - |


Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ վերջին 10 տարիների ընթացքում ինտերնետի օգտագործման գերակա ուղղությունները կրել են մի քանի կարևոր փոփոխություններ: Մասնավորապես.

- 2011-2021 թթ. ընթացքում նշանակալիորեն աճել է Ֆեյսբուքի օգտագործումը՝ 16%-ից մինչև 65%: Նույն ժամանակահատվածում նշանակալիորեն նվազել է այլ սոցիալական ցանցերի առավել հաճախակի օգտագործումը՝ 43%-ից մինչև 17%:
- Նշանակալի աճել է տեսահոլովակների/երաժշտության դիտումը/ներբեռնումը և նորությունների դիտումը:
- Մյուս կողմից նշանակալի նվազել է ինֆորմացիայի փնտրումը և նամակների ստացումը/ուղարկումը: Տվյալներից կարելի է ենթադրել, որ նամակների ուղարկումը/ստացումը փոխարինվել է տարբեր մեսենջերներով ինֆորմացիայի արագ փոխանակմամբ:

Ինտերնետից օգտվելու սարքերը


Ինտերնետից օգտվելու ամենատարածված սարքը հեռախոսն է, որն օգտագործում է ինտերնետից օգտվողների 93%-ը, երկրորդը համակարգիչն է՝ 23%, իսկ երրորդը՝ պլանշետը՝ 6%:

Գծապատկեր 4. Ինտերնետից օգտվելու սարքերի տարածվածությունը



Հեռախոսով ինտերնետից օգտվելը շատ տարածված է բոլոր սոցիալ-ժողովրդագրական խմբերում (Գծապատկեր 5): Այդ տարբերությունները շատ փոքր են ըստ բնակավայրի տիպի: Կանայք մի փոքր ավելի շատ են հեռախոսով ինտերնետ մտնում (95%), քան տղամարդիկ (90%):

Գծապատկեր 5. Հեռախոսով համացանցից օգտվողները սոցիալ-ժողովրդագրական խմբերում




Երիտասարդ տարիքային խմբերում՝ 18-29 և 30-45 տարեկան հեռախոսով ինտերնետից օգտվում են համարյա բոլորը (97-98%):

Ըստ բարեկեցության և կրթամակարդակի խմբերի տարբերությունները մեծ չեն: Կարող է տարօրինակ թվալ, որ հեռախոսով ինտերնետից օգտվելը համեմատաբար ավելի փոքր թերի բարձրագույն անձանց (ուսանողների) շրջանում: Սակայն դա կոմպենսացվում է նրանով, որ այդ անձանց շրջանում հարաբերականորեն ավելի շատ են համակարգչով ինտերնետից օգտվողները (Գծապատկեր 6):


Համակարգչով հարաբերականորեն ավելի շատ են օգտվում ինտերնետից Երևանում (31%), տղամարդիկ (27%), ունևորները (34%), ավագ տարիքի անձինք՝ 45-59 տարեկան և 60-ից բարձր տարիքի անձինք, թերի բարձրագույն և բարձրագույն կրթությամբ անձինք (որոնց շարքում հարաբերականորեն ավելի մեծ թիվ են կազմում նրանք, ում համար համակարգիչը աշխատանքի գործիք է):

Գծապատկեր 6. Համակարգչով համացանցից օգտվողները սոցիալ-ժողովրդագրական խմբերում



Պլանշետով ինտերնետից օգտվելը համեմատաբար ավելի տարածված է Երևանում (9%) և բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում (10%) և համեմատաբար ավելի քիչ է տարածված երիտասարդ 18-29 տարեկանների խմբում (3%):

Գծապատկեր 7. Պլանշետով համացանցից օգտվողները սոցիալ-ժողովրդագրական խմբերում




Սոցիալական ցանցերի օգտագործումը

Հայաստանի ամբողջ չափահաս բնակչության 71%-ը օգտվում է Ֆեյսբուքից, իսկ 60%-ը՝ ՅուԹուբից (Գծապատկեր 9): Երրորդ տեղում է Ինստագրամը, որն իր տարածվածությամբ նշանակալիորեն զիջում է Ֆեյսբուքին և ՅուԹուբին և որից օգտվում է բնակչության 33%-ը:

Իրենց տարածվածությամբ հաջորդ տեղերում են Տիկտոկը, որն օգտագործում է Հայաստանի չափահաս բնակչության 13%-ը, Օդևոկլասնիկի (7%), Վկոնտակտե (4%) և Թվիթերը (3%):


Հայաստանի բնակչության մեկ տոկոսն օգտվում է այլ սոցիալական ցանցերից:

Գծապատկեր 8. Հայաստանի հասարակությունում սոցիալական ցանցերից օգտվողներ: Տոկոսները հաշվարկված են ամբողջ ընտրանքից (1648):



Եթե սոցիալական ցանցերից օգտվողների քանակը հաշվենք միայն ինտերնետից օգտվող բնակչության ընդհանուր քանակից, ապա վերը նշված տվյալները նշանակալիորեն աճում են (Գծապատկեր 8):

Գծապատկեր 9. Սոցիալական ցանցերից օգտվողներ՝ ինտերնետից օգտվողների ընդհանուր քանակից (1340):



Գլուխ 4

Խարդախ սխեմաներ. Ինչպե՞ս պաշտպանվել դրանցից...

Խարդախները հանդես են գալիս որպես գործատուներ:

Խարդախության նշաններ

Հարձակվողները հաղորդագրություններ են ուղարկում Էլ.փոստի, SMS-ի կամ ակնթարթային մեսենջերի միջոցով՝ գրավիչ աշխատանքային պայմաններով, բարձր վարձատրություն, կես դրույքով աշխատանք, հեշտ առաջադրանքներ: Հաճախ սա շուկաներում աշխատանք է (ապրանքների և ծառայությունների վաճառք ինտերնետի միջոցով): Մանրամասները ճշտելու համար մարդուն խնդրում են հետևել հղմանը, որը տանում է դեպի հայտնի ակնթարթային մեսենջերներ: Այնտեղ «հավաքագրման մեսենջերները» նամակագրության մեջ են մտնում պոտենցիալ զոհի հետ: Նրանք կարող են հաճախորդից պահանջել բանկային քարտի տվյալները և բջջային հեռախոսահամարը: Այնուհետև, իբր, շուկայում աշխատելու համար հաշիվ գրանցելու և ակտիվացնելու համար անհրաժեշտ է մուտքի վճար կատարել, օրինակ՝ 5000 դրամ: Բայց իրականում այս գումարը հայտնվում է խաբեբաների գրպաններում, և նրանք օգտագործում են բանկային քարտի տվյալները և հեռախոսահամարը՝ փորձելով կոտրել անձի անձնական հաշիվը բանկի կայքում և գումարներ գողանալ նրա հաշվից:

Ի՞նչ անել: Աշխատանքային առաջարկներով նամակագրություններին մի՛ վստահեք, հատկապես, եթե ստիպված եք վճարել որևէ ծառայության, ապրանքի համար, վերապահել թափուր աշխատատեղ կամ կատարել այլ վճարումներ: «Երաշխավորված աշխատանքի» նման առաջարկները խաբեբաների համար հայտնի տեխնիկա են: Բացի այդ, աշխատանքի նման առաջարկներ ստանալիս մի տրամադրեք ձեր անձնագրի տվյալները և ֆինանսական տվյալները (քարտի և քարտատիրոջ տվյալները, եռանիշ ծածկագիրը քարտի հետևի մասում կամ SMS կոդը):

Բանկի հաճախորդին ծանուցում անձնական տվյալների արտահոսքի մասին

Խարդախության նշաններ

Հարձակվողները զանգահարում են քաղաքացիներին և ներկայանում որպես իրավապահ մարմինների աշխատակիցներ: Նախ՝ կեղծ ոստիկանը անձին հայտնում է, որ Կենտրոնական բանկի անունից հետաքննում է բանկային տվյալների զանգվածային արտահոսքի դեպք, որը կարող է ներառել քաղաքացու մասին տեղեկություն: Այս պատրվակով և զրուցակցին որպես զոհ ներգրավելու համար խարդախը հրավիրում է նրան ստուգել իր բանկային տվյալները գողացված տվյալների բազայով: Այնուհետև հարձակվողը հարցնում է անձին, թե որ բանկից է նա օգտագործում և խնդրում է քարտի մանրամասները, ներառյալ քարտի հետևի եռանիշ կոդը: Պատմության արժանահավատության մեջ պոտենցիալ զոհին համոզելու համար խարդախը կարող է ակնթարթային մեսենջերի կամ Էլ.փոստի միջոցով ուղարկել օպերատիվ-որոնողական գործողությունների կատարման մասին կեղծ փաստաթղթի լուսանկար:

Ի՞նչ անել: Եթե նման հեռախոսագանգ ստանաք, ընդհատե՛ք գրույցը:

Հայաստանի Հանրապետության բանկը հիշեցնում է, որ ոչ բանկի աշխատակիցները, ոչ իրավապահները երբևէ չեն պահանջում բանկային քարտի տվյալները (դրա համարը, եռանիշ ծածկագիրը հետևի մասում, SMS կոդը): Խարդախներին այս տեղեկատվությունը պետք է՝ Բացի այդ, ոչ ՀՀ բանկը, ոչ էլ իրավապահ մարմինների ներկայացուցիչները նույնականացման քարտերի կամ այլ փաստաթղթերի լուսանկարներ չեն ուղարկում:

ՀՀ Բանկի կեղծ աշխատակիցներ

Խարդախության նշաններ

ՀՀ բանկը նշում է համատարած խարդախ սխեմաների հերթական ալիքը, որոնցում հարձակվողները ներկայանում են որպես Կենտրոնական բանկի աշխատակիցներ: Նախ, խաբեբաները զանգահարում են անձին և հայտնում կասկածելի գործարքների մասին, որոնք իբր կատարվել են հաշվի կամ քարտի վրա, այնուհետև նրան ուղարկում են ՀՀ Բանկի աշխատակցի կեղծ ID-ն՝ լոգոտիպով և կնիքով մեսենջերի կամ Էլ.փոստի միջոցով:

Նման փաստաթղթերը կարող են պարունակել իրական աշխատակիցների անուններ. հարձակվողները կարող են վերցնել այս տեղեկատվությունը կարգավորողի կայքից: Կեղծ անձը հաստատող փաստաթուղթ ուղարկելով՝ նրանք հույս ունեն մարդուն համոզել իրենց անբարեխիղճ արարքների արժանահավատության մեջ, որպեսզի հետագայում նրան փողից զրկեն կամ վարկ վերցնեն նրա անունով:

Ի՞նչ անել: ՀՀ Բանկը հիշեցնում է, որ ֆիզիկական անձանց հետ որպես հաճախորդ չի աշխատում, չի պահպանում նրանց հաշիվները, չի զանգահարում նրանց, իսկ նրա աշխատակիցները ոչ մեկին չեն ուղարկում նրանց փաստաթղթերի պատճենները: Եթե դուք հեռախոսագանգ եք ստանում խաբեբաներից, անմիջապես ընդհատե՛ք խոսակցությունը և հնարավորության դեպքում արգելափակե՛ք նրանց համարը: Եթե որևէ կասկած ունեք ձեր բանկային հաշվի մեջ եղած գումարի անվտանգության վերաբերյալ, զանգահարե՛ք ինքներդ ձեր բանկ պաշտոնական կայքում կամ բանկային քարտի հետևի մասում նշված համարով:

Նրանք ներկայանում են որպես բջջային օպերատորների աշխատակիցներ:

Խարդախության նշաններ

Հարձակվողները զանգահարում են քաղաքացիներին բջջային օպերատորի օժանդակ անձնակազմի անվան տակ և տեղեկացնում, որ բաժանորդի համարը

շուտով կդադարի գործել: Համարն անջատելուց խուսափելու համար մարդուն խնդրում են բջջային հեռախոսով հավաքել թվերի որոշակի համակցություն: Այնուամենայնիվ, արդյունքում բաժանորդն ակտիվացնում է զանգերի և տեքստային հաղորդագրությունների, այդ թվում՝ բանկից SMS կոդերի վերահասցեավորումը խաբեբաների համարներին: Սա թույլ է տալիս նրանց մուտք գործել բանկային հաշվի հեռակառավարում և գումար գողանալ: Բացի այդ, խաբեբաները կարող են տեղեկացնել, որ քաղաքացին պետք է երկարաձգի կապի ծառայությունների մատուցման պայմանագիրը, փոխի սակագնային պլանը ավելի շահավետով կամ անջատի վճարովի ծառայությունը: Երբեմն հարձակվողները հայտնում են, որ հեռախոսահամարը պահպանելով բջջային օպերատորը փոխելու դիմում է ստացվել:

Անկախ զանգի պատճառից՝ խաբեբաների նպատակն է կամ տվյալ անձից բջջային օպերատորի իր անձնական հաշիվ մուտք գործելու և զանգերի վերահասցեավորում կարգավորելու համար կոդ ստանալը, կամ համոզել բաժանորդին ինքն ակտիվացնել այն:

Ի՞նչ անել: Եթե նման հեռախոսազանգ ստանաք, ընդհատե՛ք զրույցը: Եթե դուք շարունակել եք խոսակցությունը և զրույցի ընթացքում ստացել եք SMS կոդ ձեր անձնական հաշվից, ապա դա ոչ մեկին մի՛ ասեք: Հարցերի դեպքում զանգահարե՛ք բջջային օպերատորի աջակցության ծառայություն՝ պաշտոնական կայքում նշված հեռախոսահամարով:

Քեշբեքի փոխանակում դրամով

Խարդախության նշաններ

Հանցագործները բանկի աշխատակիցների անվան տակ զանգահարում են քաղաքացիներին և հայտնում, որ գնումների համար կուտակված քեշբեք և այլ բոնուսային միավորներ կարելի է փոխանակել դրամով: Դա անելու համար խաբեբաները անձից խնդրում են բանկային տվյալներ և բանկից ստացված SMS կոդ՝ իբր գործողությունը հաստատելու և ծառայության դիմաց միջնորդավճար վճարելու համար: Սակայն, փաստորեն, հանցագործները, ստանալով այս տեղեկությունը, հաշվեհամարից գումար են գողանում:

Ի՞նչ անել: Եթե նման հեռախոսազանգ ստանաք, ընդհատե՛ք զրույցը: Բանկի աշխատակիցները երբեք հեռախոսով չեն պահանջում ֆինանսական տվյալներ, այդ թվում՝ քարտի հետևի եռանիշ կոդը կամ SMS կոդը: Բանկային ցանկացած հարցի, այդ թվում՝ քեշբեքի դեպքում, զանգահարե՛ք բանկ ինքներդ քարտի հետևի մասում կամ վարկային հաստատության կայքում նշված համարով:

Խոստանում են օգնել գողացված գումարների փոխհատուցման հարցում:

Խարդախության նշաններ

Նրանից գողացված գումարը տուժողին իբր վերադարձնելու համար խաբեքները ստեղծում են հատուկ կայքեր, որոնց հղումներն ուղարկվում են էլեկտրոնային փոստով, SMS կամ ակնթարթային մեսենջերներով: Երբեմն զանգում են գողացված միջոցների փոխհատուցում տալու առաջարկով: Միայն 2022 թվականի մայիսին Ռուսաստանի բանկը 38 ինտերնետային ռեսուրսների վերաբերյալ տվյալներ է ուղարկել իրավապահ մարմիններին՝ արգելափակելու համար՝ առաջարկելով տարբեր փոխհատուցումներ, ինչպես նաև խաբեքների կողմից գողացված գումարների վերադարձ: Հանցագործները դյուրահավատ քաղաքացիներին խնդրում են լրացնել անձնական և ֆինանսական տվյալներով ձևաթուղթ՝ իբր ստուգելու պարտքի վերադարձի գումարը և տրամադրելու համար: Իսկ հետո, ստանալով այս տվյալները, անձից գումար են հափշտակում:

Ի՞նչ անել: Բանկի հաճախորդն իրավունք ունի ակնկալել գողացված գումարի վերադարձը միայն այն դեպքում, եթե նա ինքնուրույն գումար չի փոխանցել խարդախ հաշիվներին և հանցագործներին չի հայտնել իր անձնական և ֆինանսական տվյալները: Եթե գումարը դուրս է գրվել առանց ձեր համաձայնության, ապա այն վերադարձնելու միակ օրինական մեխանիզմը հետևյալն է՝ անհապաղ կապվել բանկի հետ, արգելափակել քարտը և դեպքից հետո 24 ժամվա ընթացքում բանկին գրել գործունեության հետ անհամաձայնության մասին հայտարարություն:

Նրանք առաջարկում են ստուգել հաշվի տվյալները արտահոսքի համար:

Խարդախության նշաններ

Հարձակվողները քաղաքացիներին հրավիրում են ստուգել՝ արդյոք հաշվի կամ քարտի տվյալները երրորդ անձանց ձեռքն են ընկել: Դա անելու համար անձին էլեկտրոնային փոստով կամ այլ միջոցներով հղում է ուղարկվում դեպի կայք, որը ենթադրաբար ստուգում է բանկային տեղեկատվության արտահոսքը: Հենց որ տուժողը մոտքագրում է իր բանկային տվյալները այս կայքում, նրանք հայտնվում են իրական խաբեքների մոտ: Դրանից հետո հարձակվողները կարող են գողանալ քարտատիրոջ գումարը կամ օգտագործել նրա տվյալները անօրինական նպատակներով:

Ի՞նչ անել: Չկան կայքեր, որտեղ դուք կարող եք ստուգել բանկային տեղեկատվության արտահոսքի փաստը: Երբեք կասկածելի կայքերում մի՛ մոտքագրեք ձեր հաշվի կամ քարտի տվյալները (համարը, ժամկետը, վավերացման կոդը, քարտի հետևի մասում) և անձնական տվյալները (անձնագրի տվյալները, ծննդյան ամսաթիվը, բնակության հասցեն և այլն) և մի՛ հետևեք կասկածելի հղումներին, նամակներին կամ SMS-հաղորդագրություններին:

Տեղեկությունն են հայտնում, որ կանխիկ դրամի և արտարժույթի պակաս կա:

Խարդախության նշաններ

Հարձակվողներն օգտագործում են ներկայիս օրակարգը՝ քաղաքացիներից միջոցներ հափշտակելու համար: Օրինակ, բանկի աշխատակիցները, իբր, զանգահարում և հայտնում են և՛ կանխիկ ռուբլու, և՛ արտարժույթի պակասի մասին: Այնուհետև նրանք առաջարկում են քարտից կամ բանկային հաշվից գումար փոխանցել որոշակի «հատուկ հաշվի», որից անձը կարող է հետագայում անարգել միջոցներ հանել: Նման հաշիվ բացելու համար հարձակվողները քաղաքացուց պահանջում են ֆինանսական տվյալներ՝ քարտի համարը, ներառյալ դրա հետևի եռանիշ կոդը, ինչպես նաև բանկից հաստատման SMS կոդ: Իմանալով այս տեղեկատվությունը, նրանք մուտք են ստանում տուժողի հաշիվ և դրանից միջոցներ են փոխանցում խարդախ հաշիվներին:

Ի՞նչ անել: Եթե դուք նման հեռախոսազանգ եք ստանում, անմիջապես վերջացրե՛ք զանգը: Բանկի աշխատակիցները երբեք հեռախոսով չեն հարցնում անձնական և ֆինանսական տեղեկատվություն, ներառյալ քարտի հետևի եռանիշ կոդը կամ SMS կոդը: Ձեր հարցերը պարզաբանելու համար զանգահարե՛ք բանկ՝ քարտի հետևի մասում նշված համարով կամ վարկային հաստատության պաշտոնական կայքում:

Առաջարկում են գումար փոխանցել «ԿԲ հատուկ հաշվին».

Խարդախության նշաններ

Վերջերս հարձակվողները հաճախ զանգահարում են անձին հաղորդագրությունով, որ անհայտ անձինք փորձում են գումար գողանալ նրա հաշվից և միջոցների անվտանգության համար անհրաժեշտ է դրանք փոխանցել Կենտրոնական բանկի «հատուկ» («ապահով») հաշվին: Փաստորեն, հաշիվը, որի մանրամասները հայտնել են հարձակվողները, պատկանում է նրանց: Խարդախները սխեմայում օգտագործում են կարգավորիչի հիշատակումը պոտենցիալ զոհի զգոնությունը թուլացնելու համար: Երբեմն, անձի վստահությունը շահելու համար, զանգահարողները կարող են հիշեցնել ձեզ անվտանգության կանոնների մասին, օրինակ՝ խորհուրդ տալ երբեք չիրապարակել ֆինանսական տեղեկատվությունը:

Ի՞նչ անել: ՀՀ բանկը չի աշխատում ֆիզիկական անձանց հետ որպես հաճախորդներ, չի պահպանում նրանց հաշիվները և չի զանգում քաղաքացիներին: Եթե դուք նման հեռախոսազանգ եք ստանում, անմիջապես վերջացրե՛ք զանգը:

Չամոզում են ձեզ վարկ ձևակերպել

Խարդախության նշաններ

Մարդը զանգ է ստանում վարկային բյուրոյի ենթադրյալ աշխատակցից, ով պնդում է, որ խարդախները փորձում են վարկ վերցնել իր կամ նրա մերձավոր ազգականների համար: Կարճ ժամանակ անց նրանք նորից զանգահարում են նրան և կարող են ներկայանալ որպես բանկի անվտանգության ծառայության, իրավապահ մարմինների կամ ՀՀ Բանկի աշխատակից: Չանգահարողը հաստատում է, որ անհայտ անձինք իսկապես դիմում են վարկ ստանալու համար քաղաքացու կամ նրա մերձավորների անունով, և դրա ապօրինի կատարումը կանխելու համար անհրաժեշտ է ինքներդ առցանց կամ բանկի գրասենյակում դիմել «հակառակային» վարկի համար. որքան հնարավոր է շուտ. վարկի գումարը պետք է համընկնի անհայտ անձանց կողմից անձնագրային տվյալների միջոցով դիմելու չափին:

Չամոզիչ լինելու համար հանցագործները քաղաքացուն խնդրում են արագ գործել և ոչ մեկին ոչ մի դեպքում չասել վարկի և դրա նպատակների մասին, քանի որ գաղտնի գործողություն է իրականացվում բանկի աշխատակիցներից խարդախին հայտնաբերելու ուղղությամբ: Նրանք տուժողին համոզում են, որ նրա գործողությունները կբացահայտեն հանցագործին, իսկ վարկային պատմությունը կմնա մաքուր: Չրոյցի ընթացքում զանգահարողները պարզում են, թե տուժողը որ բանկերից է օգտվում, և վստահություն ձեռք բերելու համար հարցնում են՝ նա կորցրել է անձը հաստատող փաստաթղթերը, թե անձնագրի տվյալները փոխանցել է որևէ մեկին:

Ի՞նչ անել: Եթե դուք նման հեռախոսազանգ եք ստանում, անմիջապես վերջացրե՛ք զանգը: Ո՛չ բանկի աշխատակիցները, ո՛չ վարկային պատմության բյուրոները քաղաքացիներին հեռախոսով չեն տեղեկացնում իրենց վարկային պատմության փոփոխությունների մասին: Որպես կանոն, միայն խաբեբաները կարող են հայտնել հեռախոսով կամ այլ կերպ վարկ ստանալու փորձի մասին:

Եզրակացություն

Տվյալ հետազոտական աշխատանքի ընթացքում ուսումնասիրելով տարբեր աղբյուրներ և համացանցի ճյուղեր, ես կարող եմ ասել, որ համացանցը և ընդհանրապես տեղեկատվական տեխնոլոգիաները զարգանում են շատ մեծ արագությամբ և ամեն տարի համացանցից օգտվողների թիվը աճում է մի քանի միլիոնով, քանի որ համացանցը շատ արագ և հարմար միջոց է հաղորդակցվելու և ինֆորմացիա ստանալու համար, բայց պետք է նաև մոռանալ բնական շփման մասին: Ոչ մեկ չի կարող հերքել այն փաստը, որ համացանցը շատ օգտակար է և հարմարավետ, բայց այն ունի նաև վատ կողմեր, որոնցից մեկը, ինչպես արդեն նշեցի, ֆիզիկական շփումից խուսափելն է, բացի այդ կան նաև տարբեր խարդախ

սխեմաներ, որոնց միջոցով այդ սխեմաներն իրականացնողը կարող է իմանալ ձեր գրեթե բոլոր տվյալները: Կա մի տարածված սխեմա, որը հին է, բայց աշխատում է, սխեման կայանում է նրանում, որ ինչ որ մեկը ստեղծում է անձնական էջ և անվանում այն օրինակ ինչ-որ մի բանկի անունով և գրում մարդկանց(Յաճախ թիրախ են դառնում պապիկները կամ տատիկները, քանի որ նրանք համեմատաբար ավելի քիչ բան գիտեն այդպիսի սխեմաների մասին)նամակը ունենում է մոտավորապես այսպիսի բովանդակություն. «Բարև ձեզ: x օրը x ժամին Ձեր անունով վարկ է վերցվել x գումար, դա Դո՞ւք եք եղել, թե՞ ոչ, եթե ոչ, մուտքագրեք Ձեր տվյալները, որպեսզի Ձեր վարկը չեղյալ համարվի և սառեցվի Ձեր հաշիվը»:

Յաճախ մարդիկ նման հաղորդագրություն տեսնելուց հետո չեն էլ մտածում այն մասին, որ պետք ստուգել աղբյուրը, ստուգել հաշիվը, զանգահարել բանկ և անձամբ հարցնել, այլ խուճապի են մատնվում և մուտքագրում իրենց տվյալները, որից հետո արդեն իսկապես վարկ է վերցվում x գումարով:

Ես շատ ավելի բազում սխեմաներից եմ տեղյակ, որոնք թվում են շատ հասարակ, բայց մարդիկ միևնույն է ընկնում են այդ ծուղակը, այնպես որ, զգո՛ւյշ եղեք, մի՛ հավատացեք ամեն բանի, ինչը կտեսնեք համցանցում :

Աղբյուրներ

- diplomacy.edu
- ARMENPRESS
- chatgpt
- media.am
- <https://socchel.ru/tipichnye-moshennicheskie-shemy>

